ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ ԵՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ (ԱՌԻԴԻՏԻ ՉԵՆԹԱՐԿՎԱԾ)

«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

1. Ներածություն

2025 թվականի առաջին վեց ամիսները նշանավորվել են «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի («Ընկերություն») զգալի առաջընթացով, որն արտացոլում է դինամիկ հեռահաղորդակցության միջավայրում ռազմավարական նպատակներն իրականացնելու մեր կարողությունը: Մենք պահպանել ենք շուկայի առաջատար դիրքը, հասել ենք կայուն ֆինանսական ցուցանիշների և արագացրել ենք մեր ներդրումները հաջորդ սերնդի ենթակառուցվածքների, մասնավորապես՝ 5G ցանցի գործարկման հարցում: Նոր գործընկերներ են միացել «RED» համակցված հարթակին, որն ընդլայնել է ֆիքսված և բջջային կապի ծառայությունների աշխարհագրական հասանելիությունը:

Այս զեկույցը ներկայացնում է Ընկերության գործառնական հիմնական ցուցանիշները, ֆինանսական արդյունքները, ռիսկերի կառավարման մոտեցումը և 2025 թվականի հեռանկարները: Այն ծառայում է որպես կարևոր գործիք շահագրգիռ կողմերի համար՝ հասկանալու մեր առաջընթացը երկարաժամկետ տեսլականի իրականացման ուղղությամբ. լինել թվային կապի և ծառայությունների առաջատար մատակարարը Հայաստանում:

2. Ոլորտում առկա իրավիճակ և կարգավորող միջավայր

Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտը արագ զարգանում է՝ տեխնոլոգիական առաջընթացի, սպառողների վարքագծի փոփոխության և կարգավորող մարմինների վերահսկողության աճի շնորհիվ:

- Տվյալների սպառումը շարունակում է աճել երկնիշ տեմպերով՝ պայմանավորված սմարթֆոնների, տեսանյութերի հոսքային հեռարձակման և ամպային ծառայությունների ներդրմամբ:
- Ավանդական ձայնային և SMS ծառայություններից ստացվող եկամուտները վտանգված են OTT ծառայությունների, օրինակ՝ WhatsApp-ի, Viber-ի և Telegram-ի, օգտագործման ծավալների պատճառով:
- Աճել է կարգավորող մարմնի կողմից ծառայությունների որակի նկատմամբ վերահսկողությունը:
- Մակրոտնտեսական իրավիճակը մնում է կայուն, սակայն առկա է դրամ/ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքների տատանումներով պայմանավորված ազդեցությունգործառնական և կապիտալ ծախսերի պլանավորման վրա:

3. Ֆինանսական կատարողական

Ընկերության ֆինանսական ցուցանիշները 2025 թվականի առաջին կիսամյակում արտացոլում են եկամուտների արձանագրված նշանակալի աճը, կայուն գործառնական դրամական հոսքերը և ամրապնդված հաշվեկշիռը:

- Ընդհանուր եկամուտ՝ 29.1 միլիարդ դրամ (2024 թվականի առաջին կիսամյակ՝ 27.7 միլիարդ դրամ, +5.1%)
- Շարժական կապի ծառայություններ՝ 25.6 միլիարդ դրամ (2024 թվականի առաջին կիսամյակ՝ 24.9 միլիարդ դրամ, +2.9 %):
- Բջջային ինտերնետ՝ 14.96 միլիարդ դրամ (2024 թվականի առաջին կիսամյակ՝ 13.9 միլիարդ դրամ, +7.4%), որը կազմում է բջջային ինտերնետ կապի շուկայի եկամուտների 69.4%-ը:
- Ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ՝ 911 միլիոն դրամ (2024 թվականի առաջին կիսամյակ՝ 656 միլիոն դրամ, +38.9%), աճը պայմանավորված է համակցված ապրանքների ծառայությունների եկամուտների աճով:
- Ռոումինգ՝ 836 միլիոն դրամ (2024 թվականի առաջին կիսամյակ՝ 675 միլիոն դրամ, +23.8%), աճը պայմանավորված է «VOYAGE» փաթեթներով, որոնք հասանելի են ավելի քան 70 երկրներում:
- EBITDA՝ 16.3 միլիարդ դրամ (2024 թվականի առաջին կիսամյակ՝ 16.6 միլիարդ դրամ)՝ արտացոլելով գործառնական կայուն կատարողականը:
- Զուտ շահույթ՝ 6.6 միլիարդ դրամ (2024թ. առաջին կիսամյակ՝ 9.3 միլիարդ դրամ), որի վրա ազդել են 80 միլիոն ԱՄՆ դոլարի պարտատոմսերի հաջող թողարկմանը հաջորդած ֆինանսական ծախսերը և 5G ներդրման համար ռադիոհաճախականությունների ձեռքբերման հետ կապված ամորտիզացիոն ծախսերը:
- Գործառնական դրամական հոսք՝ 13.6 միլիարդ դրամ (2024թ. առաջին կիսամյակ՝ 10.2 միլիարդ դրամ)՝ ապահովելով կայուն իրացվելիություն:
- Ընդհանուր ակտիվներ՝ 118.6 միլիարդ դրամ (2024թ. դեկտեմբերի 31՝ 87.9 միլիարդ դրամ), որը պայմանավորված է ոչ նյութական ակտիվների (5G-ի ռադիոհաճախականություններ) և ավանդային մնացորդների աճով: Ավանդային մնացորդները ներկայացնում են ժամանակավոր ազատ դրամական միջոցներ, որոնք Ընկերությունը նախատեսում է ներդնել ռազմավարական նախագծերի իրականացման համար:
- Կապիտալ ներդրումներ՝ 2025թ. առաջին կիսամյակում ներդրումները կազմել են 4.4 միլիարդ դրամ, ինչը գրեթե երեք անգամ ավելի է, քան 2024թ. առաջին կիսամյակում կատարված ներդրումները: Այս աճը ուղղված է Հայաստանում 5G ցանցի զարգացմանը:

3.1. Արդյունքների նկարագրություն

Չնայած մրցակցային շուկայական պայմաններին և շարունակաբար ի հայտ եկող մարտահրավերներին՝ Ընկերության երկարաժամկետ ռազմավարությունը ապահովում է շուկայում առաջատար դիրքի պահպանումը: Ընկերության բոլոր ծառայություններն ու պրոդուկտները հիմնված են տվյալների վերլուծության վրա, ինչը թույլ է տալիս ամրապնդել հաճախորդների հավատարմությունը, շարունակաբար բարելավել

հեռահաղորդակցության ծառայությունները, իրականացնել 5G ցանցի նախագծման աշխատանքներ և օպտիմալացնել 4G ցանցը: Ցանցի շարունակական զարգացումն Ընկերության ռազմավարական առաջնահերթությունն է:

3.1.1. 2025 թվականի առաջին կիսամյակում Ընկերությունը շարունակում է գրանցել կայուն ֆինանսական աճ: Բջջային բիզնեսի եկամուտները կազմել են 27.94 միլիարդ դրամ, ինչը 5.9%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի եկամուտներից: Բջջային բիզնեսի եկամուտների մասնաբաժինը կազմել է 58.8%, ինչը 0.6 տոկոսային կետով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Ընկերությունը կանխատեսում է, որ աճի դինամիկան կպահպանվի նաև հաջորդ տարիներին:

Բջջային բիզնեսի եկամուտներ

Եկամուտների մասնաբաժինը



Եկամուտներ, մլրդ դրամ



3.1.2. Բջջային ինտերնետ ծառայությունները Հայաստանում դինամիկ աճ են գրանցում՝ թույլ տալով Ընկերությանն այս ոլորտում լինել շուկայի առաջատար: 2025 թվականի առաջին կիսամյակում Ընկերության բջջային ինտերնետ ծառայություններից ստացված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 7.4%-ով և կազմել 14.96 միլիարդ դրամ, իսկ մասնաբաժինը կազմել է 69.4%, ինչը 1.2 տոկոսային կետով ավելի է, քան 2024 թվականի առաջին կիսամյակում: 2025 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ Ընկերությունը բջջային ինտերնետ է տրամադրել 1,911,417 բաժանորդի:

Շարժական ինտերնետ

Եկամուտների մասնաբաժինը



Եկամուտներ, մլրդ դրամ



3.1.3. Բջջային ինտերնետից ստացված եկամուտները սերտորեն կապված են տեղական և միջազգային առաջատար թվային ընկերությունների հետ գործընկերության հետ: Այս գործընկերությունը թույլ է տալիս մեզ մեր սակագնային պլաններում և ծառայություններում ներառել նորարարական թվային ծառայություններ և բովանդակություն: Նման մոտեցումը բիզնեսի դիվերսիֆիկացման մի քանի ուղղություններից մեկն է:

3.1.4. Ընկերության ռոումինգից ստացված եկամուտները 2025 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 23.8%-ով և կազմել 836.21 միլիոն դրամ:

Միջազգային ռոումինգ ծառայությունների եկամուտները, մլն դրամ



Ամենատարածված ռոումինգի ծառայություններից մեկը Ընկերության «VOYAGE» փաթեթներն են, որոնց միջոցով բաժանորդները ստանում են մրցակցային սակագներ ինտերնետ ռոումինգի համար: Ծառայությունը հասանելի է ավելի քան 70 երկրներում:

3.1.5. «RED» համակցված հարթակի գործարկումը նոր քայլ է բիզնեսի դիվերսիֆիկացման ուղղությամբ: Այն համատեղում է ֆիքսված և բջջային կապի ծառայությունները, ստեղծելով ավելի հարմար, ամեն ինչ մեկում փորձառություն բաժանորդների համար: Այս բաց համագործակցային հարթակը հանդես է գալիս որպես շուկայում առկա համակցված մոդելների այլընտրանք:

Ֆինանսական կայուն աճի ցուցանիշները ամփոփում են տարիների ընթացքում գրանցված արդյունքներն ու նվաճումները՝ ընդգծելով Ընկերության հանձնառությունը բարձրորակ ծառայություններ մատուցելու և հաճախորդների գոհունակությունն ապահովելու հարցում:

4. Հիմնական ռիսկեր և անորոշություններ

Ընկերությունը գործում է բարդ միջավայրում, որում առկա ռիսկերը կարող են ազդել նրա գործունեության վրա: Հիմնական ռիսկերը ներառում են.

4.1 Շուկայական և մրցակցային ռիսկեր

OTT հավելվածների և eSIM տեխնոլոգիայի աճող ազդեցությունը սպառնում է ավանդական ռոումինգի եկամտի հոսքերին: Ռիսկերի մեղմացման միջոցառումները ներառում են շարունակական նորարարությունների ներմուծում, փաթեթային ծառայությունների առաջարկում և ռազմավարական գործընկերությունների ստեղծում:

4.2 Կարգավորման և իրավական ռիսկեր

Ռադիոհաճախականային ռեսուրսների բաշխմանը, լիցենզավորման վճարների և տվյալների գաղտնիությանն ուղղված կարգավորումների հնարավոր փոփոխությունները կարող են հանգեցնել ծախսերի աճի: Մենք ակտիվորեն համագործակցում ենք կարգավորող մարմինների հետ և խստորեն պահպանում ենք համապատասխանության (Compliance) պահանջները:

4.3 Ֆինանսական և տնտեսական ռիսկեր

Փոխարժեքների, տոկոսադրույքների տատանումները և գնաճը էական մարտահրավերներ են ներկայացնում: Մենք որդեգրել ենք խելամիտ ֆինանսական քաղաքականություն, կիրառում ենք ծախսերի վերահսկման և ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման մոտեցումներ:

VIVA

5. Ակնկալիքներ

2025 թվականի երկրորդ կիսամյակի ակնկալիքը դրական է՝ չնայած շարունակական մարտահրավերներին.

- Ակնկալվում է բջջային տվյալների կայուն աճ՝ հաշվի առնելով սմարթֆոնների օգտագործման դինամիկան և 5G ցանցի վաղ ներթափանցումը:
- 5G-ի գործարկումը համահունչ է Ընկերության ներդրման ծրագրերին:
- Ակնկալվում է EBITDA մարժան պահպանել 40%-ից բարձր մակարդակում՝ ծախսերի արդյունավետությունն ապահովելու միջոցով:
- Շարունակական ռազմավարական ներդրումներ համակցված թվային ծառայություններում և գործընկերություններում՝ եկամտի հոսքերը դիվերսիֆիկացնելու համար:

6. Նշանակալի իրադարձություններ

- 80 միլիոն ԱՄՆ դոլարի պարտատոմսերի հաջող թողարկում՝ ռազմավարական ներդրումները ֆինանսավորելու համար:

7. Պատասխանատու անձանց հայտարարություն

Ընկերության Գլխավոր տնօրենը սույնով հաստատում է, որ իր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

- «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի 2025 թվականի առաջին կիսամյակի միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «Վիվա Արմենիա» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը,
- Ընկերության կառավարման մարմինների 2025 թվականի միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

Արմեն Ավետիսյան

Գլխավոր տնօրեն

29 օգոստոսի 2025թ.

Միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար (աուդիտի չենթարկված)

«Վիվա Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. հունիսի 30-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	19,929,107	21,158,761
Ոչ նյութական ակտիվներ	27,959,956	17,706,329
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	4,766,255	4,590,340
Ներդրումներ համատեղ ձեռնարկումներում	198,930	198,930
Տրամադրված փոխառություններ	23,188,150	26,601,078
Հետաձգված հարկային ակտիվներ	2,274,724	2,252,121
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար կանխավճարներ	566,469	957,352
	78,883,591	73,464,911
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	635,550	483,485
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,783,511	4,320,413
Բանկային ավանդներ	23,601,815	3,525,618
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	1,112,145	846,404
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,611,413	5,304,157
	39,744,434	14,480,077
Ընդամենը ակտիվներ	118,628,025	87,944,988

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

	2025թ. հունիսի 30-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կապիտալ և պահուստներ		
Բաժնետիրական կապիտալ	550,000	550,000
Պահուստային կապիտալ	122,364	122,364
Կուտակված շահույթ	42,310,960	45,744,892
	42,983,324	46,417,256
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություններ	3,829,423	3,657,434
Բանկային վարկեր	6,645,324	14,418,356
Պարտատոմսերի գծով պարտավորություններ	29,335,744	0
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17,268,662	9,689,528
Պայմանագրային պարտավորություններ	30,070	33,645
	57,109,223	27,798,963
Ընթացիկ պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություն	1,806,407	1,748,032
Բանկային վարկեր	3,536,078	3,209,124
Պարտատոմսերի գծով պարտավորություններ	2,061,634	0
Պայմանագրային պարտավորություններ	1,336,089	1,510,038
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9,137,352	5,538,084
Շահութահարկի գծով պարտավորություն	657,918	1,723,491
	18,535,478	13,728,769
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	118,628,025	87,944,988

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Արմեն Անանյան
Գլխավոր տնօրեն

Անետա Էփրիկյան
Ֆին. և հաշվ. վարչության պետ

Լուսինե Զաքարյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջան	2024թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջան
Հասույթ պայմանագրերից		
Շարժական կապի ծառայություններ	25,573,704	24,864,368
Ֆիքսված կապի ծառայություններ	911,365	656,278
Միջնորդավճարներից հասույթ	1,987,020	1,332,780
Ապրանքների վաճառքից հասույթ	361,037	176,624
Այլ եկամուտ		
Այլ գործառնական եկամուտ	285,283	667,096
	29,118,409	27,697,146
Մաշվածություն և ամորտիզացիա	(7,094,961)	(6,362,195)
Աշխատավարձ և այլ հատուցումներ աշխատակիցներին	(5,184,571)	(4,667,586)
Փոխկապակցման և ռոումինգի ծախսեր	(1,958,943)	(1,974,490)
Ցանցի շահագործման այլ ծախսեր	(2,711,450)	(1,926,595)
Վաճառված ապրանքների ինքնարժեք	(323,436)	(156,919)
Այլ գործառնական ծախսեր	(2,669,653)	(2,355,955)
	(19,943,014)	(17,443,740)
Գործառնական գործունեությունից շահույթ	9,175,395	10,253,406
Ֆինանսական եկամուտ	1,240,183	314,418
Ֆինանսական ծախս	(2,263,527)	(1,305,386)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)	(133,434)	1,188,767
Շահույթ մինչև հարկերը	8,018,617	10,451,205
Շահութահարկի գծով ծախս	(1,452,549)	(1,130,288)
Ժամանակաշրջանի շահույթ	6,566,068	9,320,917
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	6,566,068	9,320,917

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	82,500	36,852,906	37,485,406
Ժամանակաշրջանի շահույթ	-	-	9,320,917	9,320,917
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	9,320,917	9,320,917
Շահաբաժիններ	-	-	(6,000,000)	(6,000,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(6,000,000)	(6,000,000)
Պահուստային կապիտալի համալրում		-	-	
2024թ. հունիսի 30-ի դրությամբ	550,000	82,500	40,173,823	40,806,323
2025թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	122,364	45,744,892	46,417,256
Ժամանակաշրջանի շահույթ	-	-	6,566,068	6,566,068
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	6,566,068	6,566,068
Շահաբաժիններ	-	-	(10,000,000)	(10,000,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(10,000,000)	(10,000,000)
2025թ. հունիսի 30-ի դրությամբ	550,000	122,364	42,310,960	42,983,324

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջան	2024թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջան
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	6,566,068	9,320,917
Հշգրտումներ		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	7,094,961	6,362,195
Շահութահարկի գծով ծախս	1,452,549	1,130,288
Ֆինանսական եկամուտ	(1,240,183)	(314,418)
Ֆինանսական ծախս	2,263,527	1,305,386
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս, զուտ	133,434	(1,188,767)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	16,270,356	16,615,601
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	330,371	(1,082,134)
Պաշարների փոփոխություն	(152,065)	(116,304)
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդների փոփոխություն	(265,742)	98,702
Պայմանագրային պարտավորությունների փոփոխություն	(177,524)	(319,099)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(337,636)	(3,903,042)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	15,667,760	11,293,724
Վճարված շահութահարկ	(2,237,202)	(1,226,138)
Բանկերում մնացորդներից ստացված տոկոսային եկամուտ	164,220	96,156
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	13,594,778	10,163,742

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2025թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջան	2024թ. հունիսի 30-ին ավարտված ժամանակաշրջան
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(4,452,518)	(1,078,396)
Փոխառությունների տրամադրում/մարում կապակցված կողմերին	(3,938,400)	(17,333,684)
Ներդրումներ	-	(200,000)
Ավանդների ներդրում/մարում	(20,060,251)	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(28,451,169)	(18,612,080)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բանկային վարկերից մուտքեր/մարումներ	(7,671,301)	14,434,961
Պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր/մարումներ	31,389,225	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(1,055,224)	(1,184,625)
Շահաբաժինների վճարում	(2,400,000)	(6,000,000)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	20,262,700	7,250,336
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	5,406,309	(1,198,002)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(99,053)	(23,880)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	5,304,157	8,319,869
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	10,611,413	7,097,987